ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

10 նոյեմբերի 2022 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի նորընտիր ավագանու 8 (ութ) անդամներ՝ Հակոբ Բալասյանը, Դանիել Դանիելյանը, Արփինե Սուքիասյանը, Էդիկ Պիճիկյանը, Արմեն Հայրապետյանը, Աննա Մկրտչյանը, Կարապետ Հարությունյանը և Վարդան Սուքիասյանը:

Բացակա էին ավագանու անդամներ՝ Վլադիմիր Վարդևանյանը, Ավագ Սահակյանը, Արշալույս Վարդանյանը, Աշխեն Մարուքյանը, Արմեն Սարգսյանը, Լիանա Գևորգյանը և Վալենտինա Կաղիյանը:

Ավագանու նիստը վարում էր ավագանու տարիքով ավագ անդամ Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 1.2-րդ մասի համաձայն՝ մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը ավագանու նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը: Ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամն է Հակոբ Բալասյանը:

Լիլիթ Ավուշյանը նիստը վարող Հակոբ Բալասյանին փոխանցեց ավագանու անդամների գրանցման ցուցակը:

Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու նիստն իրավազոր է, քանի որ նիստին ներկա է ավագանու 8 անդամ՝ օրենքով սահմանված թվաքանակի կեսից ավելին:

Հակոբ Բալասյանը հայտարարեց նիստի բացման մասին:

Հակոբ Բալասյանը ներկայացրեց ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության և կուսակցությունների դաշինքի անվանումը:

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ, «ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ, «ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, «ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ, «ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, «ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ, «ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ «ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ», ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Բալասյանը հայտարարեց նիստի հետևյալ օրակարգը՝

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 10-ի առաջին նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար ընտրելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 57-Ա/

Հակոբ Բալասյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի ընտրության ընթացակարգը:

Համայնքի ղեկավարի ընտրությունն անցկացվում է նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում՝ «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Նիստն անընդհատ է մինչև համայնքի ղեկավարի ընտրությունը՝ բացառությամբ ընդմիջումների՝ ժամը 14.00-15.00-ն, այնուհետև՝ յուրաքանչյուր երկու ժամը մեկ անգամ՝ 30 րոպեով:

Կուսակցությունների կողմից համայնքի ղեկավարի թեկնածուների առաջադրման հաջորդականությունը որոշվում է ըստ ավագանու ընտրությունների արդյունքներով մանդատներ ստացած կուսակցությունների թվաքանակի՝ փոքրից մեծ:

Համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրվեց միայն Հակոբ Բալասյանը:

Թեկնածուի առաջադրումից հետո նիստը վարող Հակոբ Բալասյանը հրապարակեց թեկնածուի անունը՝

Հակոբ Բալասյան, «Միասնություն» դաշինքի կողմից,

որից հետո սկսվեց հարցերի քննարկումը:

Ելույթ ունեցավ Հակոբ Բալասյանը:

Նախքան քվեարկությունը, նիստը վարողը ներկայացրեց քվեաթերթիկների օրինակը և հայտարարեց, որ տպագրված է 8 անվանական քվեաթերթիկ, որում ընդգրկված է առաջադրված թեկնածուի անունը, ազգանունը, կողմ և դեմ նշում կատարելու համար վանդակներ:

Նիստը վարողը ավագանու յուրաքանչյուր անդամին տրամադրեց իրենց անվանական քվեաթերթիկները:

Տեղի ունենցավ բաց քվեարկություն:

Ավագանու անդամները կատարեցին քվեարկություն՝ ստորագրելով քվեաթերթիկների վրա, և դրանք հանձնեցին նիստը վարողին:

Նիստը վարողը հայտարարեց քվեարկության արդյունքները՝

Հակոբ Բալասյանի օգտին կողմ են քվեարկել ավագանու 8 անդամ

և հրապարակեց ընտրված համայնքի ղեկավարի անունը՝ Հակոբ Սուրենի Բալասյան:

Ելույթ ունեցավ համայնքի ավագանու անդամ Էդիկ Պիճիկյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ նաև ընտրված համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 8-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար է ընտրվել Հակոբ Սուրենի Բալասյանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ- 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 58-Ա/

Համայնքի ղեկավար ընտրվելու մասին հայտարարությունից հետո աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը ավագանու քննարկմանը ներկայացրեց համայնքի ղեկավարի երդման արարողությանն առնչվող կազմակերպչական, ինչպես նաև ավագանու առաջին նստաշրջանի գումարման օր սահմանելու մասին հարցերը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 2-ի «Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 25-ի ընտրությունների արդյունքներով Բյուրեղավան համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 20-Ա որոշումը և 2022 թվականի հոկտեմբերի 06-ի «Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N 5 արձանագրությունը՝ ***ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի երդման արարողությունն անցկացնել 2022 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը

11:00-ին, Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան շենքում (հասցեն՝ Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց):

2.Բյուրեղավան համայնքի ղեկավարի երդման արարողությանը հրավիրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցչի, Կոտայքի մարզպետին, Հայ Առաքելական Եկեղեցու թեմի առաջնորդին, պետական, եկեղեցական, մշակութային և հասարակական գործիչների:

3.Բյուրեղավան համայնքի ղեկավարի երդման արարողության նախապատրաստման և անցկացման կազմակերպման պատասխանատվությունը դնել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 59-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի նոյեմբերի 25-ը՝ ժամը՝ 17:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 60-Ա/

Նիստը փակվեց ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրվա մասին հայտարարությամբ:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ